ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/81 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	Սվիտերներ / մուգ փիրուզագույն, կարճաթև պոլո	Ծանոթություն-տվյալ ապրանքը ապրանքային նշան չունի	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	3. Սվիտեր մուգ փիրուզագույն (պոլո) – Գործվածքը՝ 50+/-2% բամբակ, 50+/-2% ակրիլ բաղադրությամբ, մակերեսային խտությունն առնվազը 250գրամ, գույնը՝ մուգ փիրուզագույն: Արտաքին տեսքը՝ կարճաթև, վիզը փակ, շրջանաձև, 2-2.5սմ լայնության կրկնակի մանժետով, պոլո տեսակի: Սվիտերի կենտրոնական բացվածքը կոճկվում է երկկողմանի մշակված 13+/-1սմ երկարությամբ մետաղյա եզրաշղթայով: Թևքերի երկարությունը ուսի միացման կարի կենտրոնական հատվածից 2-րդ հասակային խմբի համար 23-24սմ, յուրաքանչյուր հաջորդ խմբի համար ավելանում է 1սմ: Թևքերի միացման կարերի մեջից մշակված են 4.5-5սմ լայնությամբ կամրջակներ՝ 7Х5սմ չափսի կոչման տարբերանշանի անցկացման համար: Կամրջակների եռանկյունաձև ծայրերը կոճկվում են մետաղական

					կոճգամներով: Սվիտերի վերջավորությունները ջերսի տեսակի 1/1 մանժետով, որն ավարտվում է 2-3մմ լայնությամբ N842 երանգի բեժ գույնի եզրագծով (օձիքի, թևքերի, սվիտերի ստորին հատվածի եզրագծեր՝ ամբողջ երկայնքով): Մանժետների լայնությունը թևքերի վերջավորության հատվածում՝ 2.5սմ, սվիտերի ստորին հատվածում 5սմ: Կրծքավանդակի ձախակողմյան հատվածում N842 երանգի բեժ գույնի թելով ասեղնագործված է «MES OF ARMENIA» տարբերանշանը: Ձախ թևին՝ ուսագլխից 6սմ ներքև ասեղնագործված է ՀՀ եռագույն դրոշը՝ 7սմ լայնությամբ և 3.5սմ բարձրությամբ, ներքևում գրված «ՀԱՅԱՍՏԱՆ», որից ներքև ԱԻՆ տարբերանշանը, իսկ աջ թևքի կենտրոնում Փրկարար ծառայության տարբերանշանը: Բոլոր ասեղնագործման աշխատանքները կատարվում են լազերային <<Jakard>> եղանակով, պատկերների համաչափության պահպանմամբ համապատասխան գունավորումներով: Սվիտերի ներսի կողմից՝ ստորին հատվածում կարվում է պիտակ վրան նշված չափսը, արտադրողի անվանումը և խնամքի պայմանները: Չափսերը և կոչումների քանակները կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: Կոչման տարբերանշանը արտադրվում է սվիտերի գործվածքից՝ հանովի օղագոտու տեսքով: Արտաքին չափսերը՝ 7X5սմ: Թույլատրելի շեղումը +/- 2%: Աստղերն ասեղնագործված N842 երանգի բեժ գույնի թելով, հնգաթև, ուռուցիկ, 13 և 20մմ տրամագծերով:

				Գնդապետ, փոխգնդապետ, մայոր – 20մմ-ոց աստղեր: Կապիտան, ավագ լեյտենանտ, լեյտենանտ, ավագ ենթասպա, ենթասպա 13մմ-ոց: Աստղերը պետք է տեղակայվեն հետևյալ կերպ՝ Գնդապետ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ, երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից: Փոխգնդապետ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ, երկու աստղ իրար կողքի: Մայոր – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղի կենտրոնը 45մմ: Կապիտան – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 20մմ երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 20մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից, չորրորդ աստղը 20մմ հեռավորությն վրա՝ երրորդի կենտրոնից: Ավագ լեյտենանտ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից: Լեյտենանտ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ հեռավորության վրա երկու աստղ իրար կողքի: Ավագ ենթասպա – տարբերանշանի ներքևի եզրից մինչև առաջին աստղի կենտրոնը 20մմ, երկրորդ աստղը 20մմ հեռավորության վրա առաջին աստղի կենտրոնից, երրորդ աստղը 20մմ հեռավորության վրա երկրորդ աստղի կենտրոնից: Ենթասպա – տարբերանշանի ներքևի եզրից մինչև առաջին աստղի կենտրոնը 25մմ, երկրորդ աստղը 25մմ հեռավորության

				վրա առաջին աստղի կենտրոնից: Ավագ - տարբերանշանի մեջտեղով՝ վերին և ստորին եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, 12մմ լայնությամբ կարվում է մեկ ժապավեն ուղղահայց դիրքով: Ավագ սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, 12մմ լայնությամբ կարվում է մեկ ժապավեն հորիզոնական դիրքով: Սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, կարվում են 5մմ լայնությամբ երեք ժապավեններ հորիզոնական դիրքով՝ իրարից 3մմ հեռավորության վրա: Կրտսեր սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, կարվում են 5մմ լայնությամբ երկու ժապավեններ հորիզոնական դիրքով՝ իրարից 3մմ հեռավորության վրա: Փաթեթավորումը պիտակավորված անհատական պարկերով՝ վրան նշված տեսականու անվանումը, չափսը, արտադրողի անվանումը: Մատակարարված ապրանքի ողջ խմբաքանակը պետք է համապատասխանի նախորոք ներկայացված նմուշին: Պատվիրատուի պահանջով մատակարարից կարող է պահանջվել գործվածքի բաղադրության, մակերեսային խտության, ներկի կայունության վերաբերյալ լաբորատոր հետազոտության եզրակացություն՝ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպությունից:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-22/81 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
3				